ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
8	§Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	§Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	§Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	«Փրկություն, օգնություն» մեդալը բաղկացած է երկու մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 38մմ է (շեղումը՝ +/- 1մմ), գույնը՝ ոսկեգույն, որի կենտրոնում տեղադրված է երկու հրշեջների և շան հարթաքանդակը: Մեդալի դիմերեսը եզերված է 2.45մմ (շեղումը՝ +/- 1մմ) տրամագիծ ունեցող շրջանով, որի վրա ներքևի հատվածում տեղակայված են 1մմ տրամագծով 12 գնդեր: Շրջանի վերևի հատվածում՝ եզրագծին զուգահեռ կորաձև առկա է «ՓՐԿՈՒԹՅՈՒՆ, ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» հայերեն գրառումը: «Փրկություն, օգնություն» մեդալի դարձերեսը ևս եզերված է 2.45մմ (շեղումը՝ +/- 1մմ) լայնությամբ շրջանով, որի վրա ներքևի հատվածում տեղակայված են 1մմ տրամագծով 16 գնդեր: Շրջանի վերևի

				հատվածում՝ եզրագծին զուգահեռ կորաձև առկա է «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» հայերեն գրառումը: Շրջանի կենտրոնում տեղակայված է երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը ներկված է մուգ կապույտ էմալով: Դարձերեսին լազերային եղանակով դաջվում է հերթական համարը (սկսած՝ 001-ից): Կախիչը դարձերեսի կողմից ունի հատուկ ասեղային ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24մմ (շեղումը +/- 0,05մմ): Կախիչը պաստառապատված է 24 մմ (շեղումը +/- 0,05մմ) լայնություն ունեցող մուգ կարմիր մետաքսյա ժապավենով: Ժապավենի եզրերն եզերված են 2 մմ լայնություն ունեցող մոխրագույն շերտագծով: Կախիչի ներսի կողմի եզրային հատվածից՝ 5 մմ հեռավորության վրա, վերից վար ձգվում են 1մմ և 3 մմ լայնությամբ մեկական դեղին զոլակներ, որոնց վրա 1մմ հեռավորության վրա վերից վար ձգվում են երկու 1մմ լայնությամբ զուգահեռ երկնագույն զոլակներ: Սկավառակն արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից (մեդալի ընդունման ժամանակ ներկայացվում է պղնձի պարունակության վերաբերյալ փաստաթուղթ), փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշմման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝

				նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Մատակարարը ապրանքը նախապես պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը իրականացնի իր բանվորներով: Կցված նկարը կրում է տեղեկատվական բնույթ: Կրծքանշանի բնութագիրը բխում է ՀՀ Փոխվարչապետի 2025թ. սեպտեմբերի 1-ի N 577-Ն որոշումից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ШИН ЛИДЕР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊԶԲ-2026/Հ-18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
8				